Digitally signed by MUKOYAN GEVORG 2009660176
Date: 2022.11.01 12:28:22 AMT

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ԳԵՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝ /Ս.ՀԱԿՈԲՅԱՆ/

ՆԱԽԱԲԱՆ

Կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է:

Այն նպատակաուղված է մարդկության հոգևոր ժառանգությանը,գիտելիքներ ու փորձ յուրացնելուն ,պահպանելուն,հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն:

Արդի դպրոցի առջև դրված են մի շարք խնդիրներ՝ վերափոխումներ և բարեփոխումներ,12-ամյա կրթակարգի իրականացում:

Հանրակրթության պետական կրթակարգի համաձայն պարտադիր կկիրառվի միջնակարգ կրթության պետական չափորոշիչները:

2022-2023 ուս.տարում դպրոցում սովորում են 279 աշակերտնոր, դպրոցում կա նախակրթարան 21 սաներով:

Դպրոցում աշխատում են 27 ուսուցիչներ,որոնք ունեն մանկավարժական բարձրագույն կրթություն:

Ուսպլանը կազմվել է ՀՀ ԿԳ նախարարության հաստատած օրինակելի ուսպլանի հիման վրա:Հատատված է մանկավարժական խորհրդի կողմից և վավերացված:

Ուսումնական պարապմունքները կապահովեն ոչ պակաս քան 30 ուսումնական շաբաթ I , 32՝ II և 34՝III-XII դասարաններում:Գործող ուսպլանով նախատեսել 5 օրյա ուսումնական շաբաթ I-XII դասարաններում:

Հաստատվել է ուսումնական,կազմակերպչական,դասղեկների,գրադարանավար,լաբորանտի և լաբորանտի աշխատանքային պլանները:

2019-2020 ուստարում նախատեսվում է կազմակերպել բազմաթիվ միջոցառումներ,առարկայական 10-օրյակներ,հանդիպումներ և այցեր,որոնք նպաստում են աշակերտների ուսումնադաստիարակչական մակարդակի բարձրացմանը:

Նախատեսվում է կատարել դասալսումներ հետևյալ նպատակով ՝ ուսուցիչների վարպետության և գիտական մակարդակի հետ ծանոթացում տարբեր առարկաների դասավանդման ժամանակ: Աշակերտների փաստացի գիտելիքների ստուգում, ուսուցչի խոսքի նոր նյութի մատուցման ձևերի ,միջառարկայական կապերի և նոր մեթոդների իրականացման:

Առավոտյան տողանին հնչեցվում է ՀՀ օրհներգը և կատարում լիցքային վարժություններ:

Ուսումնական ժամանակացույցը.դասացուցակը,ուսուցիչների և աշակերտների հերթապահության ցուցակը փակցված է միջանցքում և ուսուցչականում: Առկա են դպրոցավարժության առընչվող բոլոր տեսակի փաստաթղթերը,խորհուրդների ,մեթոդմիավորումների նիստերի արձանագրությունները:

Գրադարանում փակցված է դասագրքերի վարձավճարների ցուցակը,երեխաները ապահոված են դասագրքերով,թեմատիկ և կիսամյակային տետրերով:

Առաջին դասարանցիների ըընդունեությունը կատարվել է ըստ կարգի:

Բոլոր ուսուցիչները վերապատրստվել են , բոլորը սիրապետում են համակարգչին, աշխատում են նոր մեթոդներում՝ օգտվելով նաև ավանդականից:

Դպրոցը համարվում է էկոդպրոց, նրա առօրյան բավականին լեցուն է,գործում է բազմաթիվ խմբակներ՝ դպրոցական և արտադպրոցական,որոնք նպատակաուղղված են ՀՀ հաար ուսյալ բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելու:

ԳԵՏԱՇԵՆԻ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

h/h	Վերահսկողության ենթակա հարցերը	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
1.	Մասնակցություն դպրոցի 2022-2023 ուստարվա կատարված աշխատանքների ամփոփմանը և նոր ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի նախապատրաստմանն ու կազմմանը:	Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում	Օգոստոս
2.	Գետաշենի դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի կազմում	Ուսումնական գործընթացի կազմակերպում	օգոստոս
3.	Անցկացնել ուսուցիչների սեմինար-խորհրդակցություն , նրանց ծանոթացնել գործող կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները	Տեղեկատվություն մանկավարժների գործունեության մասին	օգոստոս
4.	Դասարանների կոմպլեկտավորման և դասաբաշխման իրականացում	ՀՀ < < Կրթության մասին>> օրենքի և դպրոցի ըն-դունելության կարգի պահպանում:	օգոստոս
5.	ՈՒսումնական աշխատանքների նախապատրաստման և իրականացման համար անհրաժեշտ ձևաթղթերի նախապատրաստում:	Ուսումնական գործընթացի կազմակերպում	օգոստոս

6.	Ավագ դպրոցի սովորողների ընդունելության գործընթացի կազմա-կերպում, խորհրդատվական հանձնախմբի ձևավորում և աշխա-տանքների համակարգում:	ՀՀ<< Կրթության մասին>> օրենքի և ավագ դպրոցի ընդունելության կարգի պահպա-նում:	օգոստոս
7.	Ծանոթացում ուսումնական ծրագրերի, չափորոշչային պահանջ-ների,դասագրքերի վերջին փոփոխություններին,ԿԱԻ-ի հրատա-րակած տեղեկատուներին,մեթոդական նամակներին,կից գրու-թյուններին և ուղեցույցներին ,դրանց քննարկումներ առարկայա-կան մասնախմբերի նիստերում:	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրա-գործման մակարդակի վերահսկում:	օգոստոս-սեպտեմբեր
8.	2022-2023 ուստարվա առարկայական մասնախմբերի ձևավորում, նախագահների առաջադրում, մասնախմբերից մ/խ անդամների առաջադրում:	Մեթոդմիավորման կանոնադրության պահպանում	օգոստոս
9.	Նոր ուսումնական տարվա հենքային ուսպլանի ծանոթացում	Հենքային ուսպլանի պահանջների կատարում	օգոստոս
10.	Դպրոցի 2022-2023 ուստարվա ՈՒՍՊԼԱՆ-ի դպրոցական բաղա-դրիչով սահմանված ժամաքանակի վերաբերյալ առարկայական մասնախըմբերում կատարված քննարկումներ և դրանց հիման վրա այդ ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մ/խ նիստում առաջար-կությունների առաջադրում:	Հենքային ուսպլանի պահանջների կատարում	օգոստոսի 20-30
11.	Գետաշենի 2022-2023 ուստարվա և մասնավորապես 1-ին կիսամյակի ուսումնական պլանի կազմում ու ներկայացում մ/խ նիստի քննարկմանն ու հաստատմանը	ՀՀ<< Կրթության մասին>> օրենքի և հեն-քային ուսպլանի պահանջների կատարում	օգոստոսի 25-30
12.	ՈՒսուցիչների աշխատաժամանակի նորմավորում,ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից, ըստ կողմ-նորոշիչ աղյուսակի ու դասացուսակի ընձեռած հնարավորության	ՀՀ կառավարության որոշում	սեպտեմբեր
13.	Բացակա ուսուցիչների հաշվառում,բաց թողնված և փոխարինած դասաժամերի արձանագրում և ժամավճարային հաշվարկների ներկայացում	Դպրոցի կանոնադրություն	ուստարվա ընթացքում
14.	Առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանների կազմ-ում և հետագա աշխատանքների համակարգում	Մեթոդմիավորման կանոնադրության պահպանում	մինչև սեպտեմբերի 15

	,ամենամսյա նիս-տերի գումարում		
15.	Առարկայական ծրագրերին,չափորոշչային պահանջներին ,հատ-կացված շաբաթական ժամաքանակին համապատասխան թեմա-տիկ -օրացույցային պլանների կազմում և հաստատում:	մինչև սեպտեմբերի 15	մինչև սեպտեմբերի 15
16.	Դպրոցում ներառական կրթություն ապահովող ուսուցչի օգնականների աշխատանքների կանոնակարգում ԱՈՒՊ-ների կազմում	Ներառական ուսուցման մասին օրենքի պահպանում	մինչև սեպտեմբերի 15
17.	Ուսուցչի օգնականների աշխատանքային պլանների կազմում և հետևողական և վերահսկողության ապահովում	Ներառական ուսուցման մասին օրենքի պահպանում	Ուստարվա ընթացքում
18.	Ծանոթացում նոր ուստարվա գնահատման համակարգի վերա-բերյալ մեթոդական ցուցումներին,ներքին ու արտաքին գնահատ-ման համակարգի գործընթացին:	Գնահատման չափանիշների,ձևերի և մեթոդների ապահովում	սեպտեմբեր
19.	Միավորային գնահատման բաղադրիչների՝բանավոր հարցման, գործնական և գրավոր աշխատանքների քանակի ճշտում ըստ ա-ռարկաների ,դասարանների և հատկացված շաբաթական ժամա-քանակի:	Գնահատման չափանիշների,ձևերի և մեթոդների ապահովում	սեպտեմբեր
20.	Գիտելիքի օրվա գործընթացների և աշխատակարգի իրականացում, 1-ին դասարանցիների ընդունումը դպրոց՝ սեպտեմբերի 1-ին:	Արժեքային համակարգի ձևավորում	սեպտեմբերի 1
21.	Սեմինար-քննարկումներ մեթոդմիավորման նիստերում չափորո- շիչ, օրացույցային և թեմատիկ պլաններ, օրվա պլան, գնահատում, ներառական կրթուրյուն ,մեթոդ և հնարք,ուսուցչի վարվելակերպ և այլ մանկավաժական ու հոգեբանական թեմաներից	Առաջավոր փորձի փոխանակում, հաղոր-դակցում գիտամեթոդական նորույթներին	ուստարվա ընթացքում
22	Առանձին ուսուցիչների աշխատանքային գործունեության ուսում-նասիրություններ, դրանց և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների քննարկում մեթոդմիավորման և մանկավարժական խորհրդի նիստերում:	Ուսումնական գործընթացի համակարգում,դասի արդյունավետության բարձրացում	ուստարվա ընթացքում
23.	Մասնակցություն մարզում և մարզից դուրս կազմակերպվող ուսումնական,սպորտային և այլ որակի	Առաջավոր փորձի փոխանակում, հաղոր-դակցում գիտամեթոդական նորույթներին	ուստարվա ընթացքում

	միջոցառումներին,որոնք նպաստում են ոսման որակի բարձրացման,դասի արդյունավետության բարձրասցման,երեխայի էթիկայի և էսթետիկական որակի բարձրացմանը	Առաջավոր փորձի փոխանակում, հաղոր-դակցում գիտամեթոդական նորույթներին	ուստարվա ընթացքում
24.	Դպրոցում գործող բոլոր տեսակի խմբակների աշխատանքների կանոնակարգում	Դպրոցի կանոնադրության պահանջների պահպանում	Մինչև սեպտեմբերի 1
25	Մ/Խ-ի որոշումների իրականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների համակարգում:	Դպրոցի կանոնադրության պահանջների պահպանում	ուստարվա ընթացքում
26	Մ/Մ նախագահների հետ համատեղ կազմակերպել միջոցառումներ սովորողների գիտելիքների որակը բարելավելու, դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների կարողու-թյուններն ու հմտությունները զարգացնելու ուղղությամբ	Դպրոցի կանոնադրության պահանջների պահպանում	ուստարվա ընթացքում
27.	Մանկավարժական գործունեության վերահսկողություն՝ աշա-կերտների իրավունքների պահպանմանուղղությամբ	Գրավոր,գործնական, տնային և դասարա-նական աշխատանքների չափանիշների պահպանում	ուստարվա ընթացքում
28	Էլեկտրոնային գրատախտակի սպասարկման և օգտագործման համակարգում	Հաղորդակցում մանկավարժության գիտամեթոդական նորույթներին	ուստարվա ընթացքում
29	Մ/Մ նախագահների հետ համատեղ ստուգել ուսուցման տեխնի-կական միջոցների օգտագործման,դիտակտիկ նյութերի կիրառման, կաբինետների ու դասի կահավորման,թեմատիկ, փոխներգործուն , համագործակցային,բաց և օրինակելի դասերի ու դաս-միջոցառում-ների անցկացման ընթացքը	Առաջավոր փորձի փոխանակում, հաղոր-դակցում գիտամեթոդական նորույթներին	ուստարվա ընթացքում
30	Ըստ ուսպլանի և ուսումնական առարկաների ծրագրային, ուսու-ցանվող նյութի բովանդակային ու դասավանդման մեթոդական պա-հանջների,յուրաքանչյուր դասարանում ,տարբեր առարկաներից համակարգչային դասարաններում անց կացվող դասերի վարում	ՈՒսպլանի հավելվածների պահանջներ	ուստարվա ընթացքում

31	Մ/Մ-ներում առանձին առարկաների դասավանդման ուսումնասի-րություններ ա. հայտորոշիչ ուսումնասիրություններ նորակազմ 10-րդ դաս. -ում բ. հայոց լեզվի և գրականության դասավանդումը 10-րդ դասարանում գ. գ,մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդումը 8-րդ դասարանում դ. օտար լեզվի ուսուցումը (անգլերեն)6-րդ դասարանում	Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում	ուստարվա ընթացքում ուստարվա ընթացքում
32	Առարկայական օրերի և շաբաթների կազմակերպում. ա. Հայոց լեզու և գրականություն բ. մաթեմատիկա գ. օտար լեզուներ դ. պատմություն,հասարակագիտություն և ՀԵՊ ե. բնագիտական առարկաներ	Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում	փետրվար
33	Մանկավարժների գործունեության ստուգում՝ստուգողական աշխատանքներին համապատասխան	Թեմատիկ և կիսամյակային աշխատանք-ների գնահատման օբյեկտիվություն	ուստարվա ընթացքում
34	Գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից. ա.հայոց լեզու և գրականություն բ.մաթեմատիկա գ. օտար լեզուներ դ. բնագիտական առարկաներ	Սովորողների ընթացիկ և մնացորդային գիտելիքներին,կարողություններին և հմտություններին ծանոթացում,դրանց համապատասխանությունը չափորոշչային պահանջներին	ուստարվա ընթացքում
35	Մանկավարժների գործունեության վերահսկողություն՝փոխադարձ դասալսումների կազմակերպում,դրանց քանակի ու գրանցումների իրականացում:	Առաջավոր փորձի փոխանակում	ուստարվա ընթացքում
36	Աշակերտների հետ անհատական ուսուցման աշխատանքների կազմակերպում	Մանկավարժների գործունեության վերլուծություն	ուստարվա ընթացքում
37	Դասալսումներ՝տարաբնույթ և տարանպատակ. ա. անփորձ ուսուցիչների ուսուցիչների մոտ օգնություն	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների	

38	բ. փորձառու ուսուցիչների մոտ՝փորձի փոխանակում գ. երիտասարդ ուսուցիչների մոտ՝մեթոդական աջակցություն դ. ավարտական դասարաններում՝քննություններին պատրաստվա-ծության գնահատում Պարբերաբար ստուգել դասին ուսուցիչների պատրաստվածությու-նը,խթանել օրվա դասի պլանի գործածումը,բարձրացնել դրանց կիրառական արդյունավետությունը:	իրագործման մակարդակի վերհանում Ուսուցչի գործունեության ուսումնասիրում	սեպտեմ-հոկտեմ ուստարում ուստարվա ընթացքում
39	Վերահսկել ուսուցիչների աշխատանքային գործունեության ոլորտ-ները.ծրագրային նյութի կատարողական, գնահատման,բաց դասե-րի և փոխադարձ դասալսումների գործընթացը,սովորողների գիտե-լիքների,կարողությունների և հմտությունների համապատասխա-նությունը կրթական չափորոշչային պահանջներին:	Մանկավարժների գործունեության վերլուծություն	ուստարվա ընթացքում
40	Մանկավարժների գործունեության ստուգում պետական ավարտա-կան քննությունների նախապատրաստման ուղղությամբ	ՈՒսումնական նյութերի ապահովվում,ա-ռաջադիմ և հաճախումների վերահսկում	ուստարվա ընթացքում
41	Աշակերտների՝քննությունների պատրաստվածության մակարդակի ստուգում:	Հուզող հարցերի պարզաբանում և վերհա-նում,լուծումների առաջադրում	ուստարվա ընթացքում
42	Հրավիրել մանկավարժական խորհրդատվություններ,սեմինարներ, բանավեճեր, քննարկումներ, հաղորդումներուսուցման, գնահատ-ման,կիսամյակային և տարեկան ամփոփումների, փոխադրման և ավարտման կարգի, քննությունների և վերաքննությունների կարգի, դասամատյանների վարման կարգի, dasaran.am-կայքի գործունեու-թյան, մանկավարժական մեթոդիկայի նորությունների, տարիքային հոգեբանության,արժեքային համակարգի ձևավորման,սովորողների և աշխատողների ներքին կարգապահական և այլ հարցերի վերա-բերյալ:	Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացում Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում	ուստարվա ընթացքում

43	Մասնակցել ծնողական ժողովներին,ծնողական խորհրդի և աշկոմի նիստերին ու միջոցառումներին, դրանցում հանդես գալ ուսումնա-դաստիարակչական բնույթի հարցերի պարզաբանմամբ:	Ծնողներին ու աշակերտներին հուզող հար-ցերի պարզաբանում և վերհանում ,համա-պատասխան լուծումների առաջադրում	ուստարվա ընթացքում
44	Առարկայական օլիմպիադաների դպրոցական կազմկոմիտեի կազ-մում և նիստերի գումարում,խրախուսումների առաջադրում:	Օժտված աշակերտների բացահայտում, նրանց հետ տարվող աշխատանքներ	նոյեմբեր
45	Դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատ-րաստում և իրականացում,դրանց արդյունքների ամփոփում և քըն-նարկումներ մանկխորհում, մասնախմբերում,աշկոմում և ծնող-խորհրդում: ա. դպրոցական փուլ բ. առցանց փուլ գ. տարածաշրջանային փուլ դ. մարզային փուլ ե.հանրապետական փուլ	Մրցույթներին և միջոցառումներին ուսուցիչ-ների և աշակերտների հաջող մասնակցու-թյան ապահովում Մրցույթներին և միջոցառումներին ուսուցիչ-ների և աշակերտների հաջող մասնակցու-թյան ապահովում	դեկտեմբեր հունվար-փետրվար փետրվար մարտ մարտ-մայիս
46	Ժամանակավոր դասամատյանների նախապատրաստում և գործածում:	Ուսումնական գործընթացի կազմակերպում	օգոստոս-սեպտեմբեր
47	Հիմնական դասամատյանների նախապատրաստում ըստ առարկա-յացանկի ու շաբաթական ժամաքանակի,դրանց կազմում, շապիկա-վորում,էջակալում,դասղեկներին և ուսուցիչներին ծանոթացում գործածման կարգին,անվանացանկի կազմում,ճշգրտում, անձնա-կան տվյալների կազմում,գրանցումների իրականացում, գրանցում-ների փոխանցում ժամանակավորներից՝ հիմնական դասամատյան	Մատենավարության կարգի պահպանում	օգոստոս-սեպտեմբեր
48	Աշխատանք աշակերտների անձնական տվյալների ուղղությամբ	Անձնական գործերի կազմում դասղեկների կողմից,որակի գնահատում	օգոստոս-սեպտեմբեր

49	Դասղեկների գործունեության համակարգում՝դասամատյանների կազմման ու վարման պահանջներին համապատասխան:	Մատենավարության կարգի պահպանում	ուստարվա ընթացքում
50	Դասամատյանների գործածության ամենամսյա ստուգումներ, ան-հրաժեշտ դիտողությունների և առաջարկությունների գրանցում:	Մատենավարության միասնական կարգի վերահսկողություն	յուրաքանչյուր ամսվա սկիզբ
51	Աշխատանքներ սահմանված ժամաքանակից ավել բացակայած աշակերտների հետ. ա. 80 և ավել դասաժամ բացակայություն բ. 120 և ավել դասաժամ բացակայություն գ. 200 և ավել դասաժամ բացակայություն	Փոխադրման և ավարտման կարգի պահպանում	նոյեմբեր դեկտեմբեր մարտ ապրիլ-մայիս
52	1-ին կիսամյակի ավարտին աշակերտների ընթացիկ գիտելիքների ստուգում և քննարկման կազմակերպում:	Կիսամյակի առաջադիմության վերլուծում, սովորողների գիտելիքների գնահատում	դեկտեմբեր-հունվար
53	Վերապատրաստման կարիք ունեցող մանկավարժների ցանկի հստակեցում և նրանց իրազեկում ըստ սահմանված կարգի	Ուսուցիչների որակավորման բարձրացում	հոկտեմբեր
54	Վերապատրաստման դասընթացներին , սեմինարներին, մրցույթ-ներին ուսուցիչների մասնակցության ապահովում:	Ուսուցիչների որակավորման բարձրացում	ուստարվա ընթացքում
55	Սկսնակ և սակավափորձ ուսուցիչների գործունեության վերահսկողություն	Ուսուցիչների որակավորման բարձրացում	ուստարվա ընթացքում
56	Ուսուցիչների մեթոդական աշխատանքների կազմակերպում	Մանկավարժների մեթոդական գործունեու- թյան վերլուծություն	ուստարվա ընթացքում
57	Մանկավարժների հոգեբանամանկավարժական իրազեկվածության բարձրացում:	Ուսուցիչների որակավորման բարձրացում	ուստարվա ընթացքում
58	Դպրոցական գրադարանի աշխատանք	Մեթոդական և թեմատիկ ցուցադրումների կազմակերպում	ուստարվա ընթացքում

59	Աշխատանք դասագրքերի հետ. ապահովվածություն,գործածում, պահանջագրերի և կարծիքների կազմում,փորձարկումներ և քննարկումներ	Ուսումնանյութական բազայի հարստացում	ուստարվա ընթացքում
60	9-11րդ դասարաններում <<առողջ ապրելակերպ>> դասընթացի կազմակերպում և վերահսկողություն	Ուսպլանի հավելվածի պահանջների ապահովում	հունվար-փետրվար
61	9-րդ դասարանում սովորողների ավարտական, միաս-նական և կենտրոնացված քննությունների մասնակիցների նախնա-կան հայտագրում	Քննական կարգի պահանջների ապահովում	դեկտեմբեր
62	Պետական ավարտական քննությունների դիմում-հայտերի և ցուցակ-հայտերի ճշգրտում,փոփոխություններ կամ հաստատում:	Քննական կարգի պահանջների ապահովում	ապրիլ
63	2022-2023 ուստարվա փոխադրման,ավարտման և քննական կարգի մասսայականացում ուսուցիչների, աշակերտների և ծնողների շրջանում:	ՈՒսուցիչների, աշակերտների և ծնողների իրազեկում	1-10 մայիսի
64	2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության ամփոփում, փո-խադրական և ավարտական քննություններին թույլատրում:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	25-28 մայիս
65	Սահմանված ժամաքանակից ավել դասաժամ բացակայած աշա-կերտների հաշվառում,ցանկի ներկայացում մանկխորհին, փաստա-թղթերի կազմում,քննությունների և ստուգարքների կազմակերպում և անց կացում ,ծնողների իրազեկում, աշխատանք դասամատյան-ներով :	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	05-28 մայիս
66	Քննությունների և նախաքննական խորհրդատվությունների աշխա-տակարգի և ժամանակացույցի կազմում:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	մինչև մայիսի 25
67	9-րդ դասարանում ֆիզկուլտուրայի քննության նախապատրաստում ,կազմակերպում,իրականացում և ամփոփում	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	մինչև մայիսի 25
68	Քննող և ստուգող հանձնաժողովների, կազմակերպիչների ու հերթապահների նախնական ցանկի կազմում:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	մինչև մայիսի 25
69	Քննական կենտրոնի և քննասենյակների կահավորում	Քննական կարգերի պահանջների ապահովում	մինչև մայիսի 30

70	9- րդ դասարանում պետական ավարտական քննության կազմակերպում և անց կացում,դրանց արդյունքների ամփոփում և փոխանցում դասամատյաններ։	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	հունիսի 1-25
71	Աշակերտների անձնական գործերի լրացման ու վարման գործու-նեության ստուգում։	Դասղեկների աշխատանքների կազմակերպում	հունիս
72	Ավարտական փաստաթղթերի լրացման համար անհրաժեշտ ձևաթղթերի նախապատրաստում նդրանց լրացում։	Դասղեկների կազմած տեղեկատվության ճշգրտում	հունիս- հուլիս
73	Ավարտական փաստաթղթերի լրացում,ստուգում և բաշխում	Սահմանված կարգի և ժամկետի պահպանում	հունիսի 25-30
74	Ուսուցիչների և Մ/Մ նախագահների տարեկան հաշվետվու-թյունների քննարկում։	Կատարողական վերլուծություն	հունիս
75	Առանձին առարկաների տարեկան առաջադիմության մասին ամփոփագրերի կազմում	Կատարողական վերլուծություն	հունիս-հուլիս
76	2022-2023 հենքային ուսպլանի ծանոթացում, նախնա-կան կոմպլեկտավորում և դասաբաշխում ըստ գալիք տարվա դպրոցի ուսպլանի նախագծի։	Գալիք ուստարվա նախապատրաստում	հուլիս
77	Գետաշենի միջնակարգ դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2022-2023 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվության կազմում։	Կատարողական վերլուծություն	հուլիս